Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Թեմա՝	<<Համընդհանուր ներառականության առավելություններն ու բացթողումները>>
Վերապատրաստող, մենթոր՝	Նարինե Բաղդասարյան
Կատարող՝	Ալվարդ Սահակյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1

Ներառական կրթության գաղափարախոսությունը և մարտահրավերները……4

Ի՞նչ է ներառական կրթությունը ..... ……4

Ներառական կրթության անհրաժեշտությունը..... ……..8

Ինչո՞ւ է պետք ներառումը.....……8

Գլուխ 2

Համընդհանուր ներառականության առավելություններն ու բացթողումները……...10

Ներառական կրթության դրական կողմերը..... ……10

Ներառական կրթության խնդիրները .....……14

Եզրակացություն .....……...18

Գործնական մաս……21

Առաջարկություններ .....……...29

Գրականության ցանկ ..... ……31

Ներածություն

2012թ-ին ՀՀ ԿԳՆ հանդես եկավ մի նախաձեռնությամբ, որի համաձայն շրջանառությունից պետք է հանել ԿԱՊԿ ունեցող անձանց կրթության մասին օրենքը և այն ներառել հանրակրթության օրենքի մեջ՝ բոլոր հնարավոր տարբերակված մոտեցումներից խուսափելու համար:[1] Խոսքը համընդհանուր ներառականության մասին է, այսինքն՝ ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցներն ինքնըստինքյան պետք է դառնան ներառական, իսկ հանրակրթական և ներառական ծրագրերը պետք է համադրված լինեն՝ ունենալով իրենց համապատասխան արտահայտումը նաև ԱՈՒՊ-ներում: Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար: Ներառական կրթությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և չունեցող երեխաները մասնակցում և միասին սովորում են նույն դասարանում:[2] Ըստ Հելլեն Ադամս Քելլերքի՝ <<Կրթության ամենաբարձր արդյունքը հանդուրժողականությունն է>>: Սակայն այս համակարգում դեռևս առկա են մի շարք բացթողումներ և խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ անդրադառնում են ներառական կրթության որակի վրա, և այն երբեմն կրում է ձևական բնույթ: Կարծում եմ, որ նման խնդիրների պարզումը և բարձրաձայնումը ևս մի առիթ է դրանց մասին խորհելու, դրանց լուծման ուղիները որոնելու և կիրառության մեջ դնելու տեսանկյունից:

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել ներառական կրթության իրականացման գործընթացը և մշակել այդ գործընթացի իրականացման արդյունավետության բարձրացման առաջարկությունների փաթեթ:

Հետազոտական աշխատանքի **հիմքում** «Սենդվիչի» հնարն է, որտեղ խոսքը սկսվում է դրականով, խոսքի մեջտեղում կատարվում է անդրադարձ և վերլուծություն առկա բացթողումների և թերությունների մասին, վերջում խոսքն ավարտվում է դրական մտքերով:

3

Գլուխ 1

Ներառական կրթության գաղափարախոսությունը և մարտահրավերները

1.1 Ի՞նչ է ներառական կրթությունը

Նախ և առաջ եկեք հասկանանք <<ներառել>> բառի իմաստը: Ներառել նշանակում է.

1. Իր մեջ առնել՝ վերցնել, ընդգրկել, պարունակել:
2. Ներգրավել, տվյալ խմբի մեջ մտցնել:

«Ներառական կրթություն» տերմինը գալիս է ֆրանսիական <<inclusif >> բառից, որը թարգմանաբար նշանակում է «ներառում է»: «Ներառում», «ներառական կրթություն» հասկացություններն ունեն շատ լայն իմաստ, սակայն, մեր իրականության մեջ մտած որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող երեխաների, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունք դրսևորելու, նրանց համար արդյունավետ կրթություն ապահովելու, սոցիալականացմանը նպաստելու հիմնական պայմաններ: Իրականում, խոսելով ներառման գործընթացի մասին, մեզնից յուրաքանչյուրը քաջ գիտակցում է, որ ներառումը յուրաքանչյուր անձի սոցիալականացման, որակյալ կրթություն ստանալու, հավասար իրավունքներ ունենալու հնարավորության ապահովումն է՝ անկախ անձի տարիքից, սեռից, զարգացման մակարդակից, էթնիկ պատկանելությունից, այլ կերպ ասած՝ անկախ մարդկանց միջև եղած տարբերություններից:[4] Այսպիսով՝ ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:[5] Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: ՈՒստի որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել կրթություն ստանալու իրավունքի համար: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է որևէ տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:

Առանձնացնենք 3 քայլ, որ տանում է դեպի իրական ներառում: Որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝



Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:[6]

Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում:

Ըստ Ռալֆ Վալդո Էմերսոնի՝ <<Լավ կրթության նշան է՝ ամենաբարդ առարկաների մասին խոսել ամենապարզ բառերով>>:[7]

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝այդպիսի երեխաների մասին տեղեկատվության բացակայությունը, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Մարդիկ տարբեր են. դա բնական է, և ցանկացած հասարակության բազմազանությունը պայմանավորված է այդ տարբերությամբ, որը, բնականաբար, իր արտացոլումն է գտնում նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում:

Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոց, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք

հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ *հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են*:

Այսպիսով կրթության մեջ ներառումը ենթադրում է՝

- բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում,
- դպրոցական՝ ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին աշակերտների ներգավվածության աստիճանի բարձրացում,
- դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և նրանց համապատասխանեցում աշակերտների բազմազանությանը և առանձնահատկություններին,
- ուսումնական ոլորտում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամներով և կրթական հատուկ պահանջ ունեցողներով),
- խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռքբերում , որը կոչված է ապահովելու որոշակի աշակերտների մասնակցությունն ուսումնականգործընթացին՝ աշակերտների համար ավելի մեծ փոփոխությունների ակնկալիքներով,
- աշակերտների միջև տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում,
- սեփական համայնքում կրթություն ստանալու աշակերտների իրավունքի գիտակցում,
- ինչպես աշխատակազմի, այնպես էլ աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում,
- համայնքային արժեքների կայացման ու զարգացման, ինչպես նաև նվաճումների մեծացման գործում դպրոցների դերի կարևորում,
- դպրոցների ու համայնքների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատում,

- կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման ու ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Ներառում նշանակում է

- Ողջունել բազմազանությունը
- Դպրոց բերել այն երեխաներին, որոնք կարող են իրենց մեկուսացված զգալ
- Բարենպաստ պայմաններ ստեղծել բոլոր սովորողների, այլ ոչ թե շերտավորման սկզբունքով առանձնացված երեխաների խմբերի համար
- Կրթությունը հավասարապես մատչելի դարձնել բոլոր երեխաների համար՝ առանց վերջիններիս շերտավորելու:

Ներառում չի նշանակում

- Միայն հատուկ կրթության բարեփոխումներ, այլ՝ ողջ կրթական համակարգի բարեփոխում
- Հատուկ դպրոցներ, այլ թերևս՝ լրացուցիչ օժանդակություն աշակերտներին հանրակրթականդպրոցի շրջանակներում
- Արձագանքել միայն առանձնահատկությանը, այլ բարելավել կրթության որակը բոլորսովորողների համար
- Բավարարել միայն հաշմանդամ երեխաների կարիքները: Բավարարելմի երեխայի կարիքները մեկ այլ երեխայի հաշվին:

7

Ներառական կրթության անհրաժեշտությունը

Ինչո՞ւ է պետք ներառումը

Հետազոտությունները ցույց են տվել, որ ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու *խտրականությունը*:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Ներառական կրթության ճիշտ կազմակերպված գործընթացը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները:

Ժամանակակից մանկավարժության մեջ նշանակալից է դառնում անձի զարգացման միջավայրային մոտեցումը: Այստեղ առաջնային է այն գաղափարի ընդունումը, որ մարդը ձևավորվում է խմբակցության մեջ և դրա միջոցով: Եթե սովորողը գտնվի կրթական այնպիսի տարածքում, ուր խրախուսվում է սոցիալական համերաշխությունը, ներդաշնակությունը, փոխադարձ հարգանքը, ապա ինքն էլ կսովորի ապրել խաղաղ, առանց հակասությունների՝ միաժամանակ պահպանելով սեփական դեմքը և յուրակերպությունը: Ելնելով այս ամենից՝ ներառական կրթությունը դառնում է ժամանակակից մանկավարժության բաղկացուցիչ մասերից՝ ձևավորելով հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքներով մարդկանց հանդեպ:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը:

Ուսուցումը պետք է խթանի և ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը: Երեխաները, միասին սովորելով, սովորում են նաև միասին ապրել, և հաշմանդամություն ունեցող

երեխաներին ոչ թե պետք է խղճալ և դիտարկել միայն որպես խնամքի կարիք ունեցողներ, այլ նրանց, նախևառաջ, պետք է ապահովել որակյալ կրթություն և երեխայակենտրոն միջավայր:[8] Ցավոք, ներառական կրթության համակարգում դեռևս ունենք մի շարք խնդիրներ, որոնց դեռ կանդրադառնանք:

Գլուխ 2

Համընդհանուր ներառականության առավելություններն ու բացթողումները

Ներառական կրթության դրական կողմերը

Ինչպես տեսանք, ներառական կրթությունը մեծ օգուտներ ունի ինչպես հաշմանդամություն ունեցող երեխաների, այնպես էլ այն երեխաների համար, ովքեր որևէ տեսակի հաշմանդամություն չունեն: Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Երբ կրթությունը ներառական է, դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: [9] Ներառական կրթությունը տեղի է ունենում, երբ կա լավ պլանավորում, աջակցություն և նվիրվածություն այն մասնագետների կողմից, ովքեր աշխատում են այս երեխաների հետ: Յուրաքանչյուր ոք կարող է սովորել յուրաքանչյուրից, ինչպես նաև միասին սովորելով՝ սովորում են նաև միասին ապրել: Ի վերջո, ինչի՞ց է սկսվում ներառական կրթությունը, որի արդյունքում երաշխավորվում է որակյալ կրթությունը:



Սկսվում է մանկավարժների վերաբերմունքից (սիրտ), հմտության (ձեռք) և գիտելիքի(գլուխ) եռամիասնության դրսևորումից:[10] Առանց այս եռանկյան գոյության՝ շատ դժվար կլինի խոսել որակյալ կրթության մասին, ուստի ուսուցիչներն ու դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները իրենց մեջ պետք է ունենան այս հավատամքը՝ սիրտ (վերաբերմունք), գլուխ (գիտելիք) և ձեռք (հմտություն), որոնցով նրանք կհաղթահարեն բոլոր այն դժվարությունները, որոնց նրանք բախվում են ամեն օր: Կրթության այլ ձևերի նման ներառական կրթությունը ևս ունիառավելություններ և բացթողումներ:

Ստորև կներկայացվեն *ներառական կրթության շահեկան լինելու պատճառները.*

- **Կրթության տեսանկյունից.**

Դպրոցին ուղղված բոլոր երեխաների համատեղ ուսուցման պահանջը մղում է ուսուցման նոր ուղիների որոնման, որոնք կհամապատասխանեն բոլոր երեխաների պահանջներին՝ անկախ առանձնահատկություններից և դրանցով պայմանավորված հիմնախնդիրներից:

- **Այն շահեկան է նաև սոցիալական առումով:**

Նմանատիպ ինտեգրված դպրոցներն ունակ են փոխելու հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության և խտրականության հանդեպ, բոլոր երեխաներին միասին ուսուցանելու ճանապարհով նրանք կարող են ձևավորել արդար, խտրականությունից զերծ հասարակության ստեղծման հիմքերը:

- **Համընդհանուր ներառական կրթությունը արդարացվում է նաև տնտեսական տեսանկյունից:**

Անհամեմատ մատչելի է հիմնել և պահել համատեղ ուսուցմամբ դպրոցներ, քան ստեղծել տարբեր խմբերի երեխաների համար մասնագիտացվող տարբեր տիպի դպրոցական համալիրներ:

Այսպիսով, ներառական կրթությունը մարդու իրավունքն է. այն կարող է ապահովել լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Ներառական կրթության իրականացման անհրաժեշտությունը հիմնված է հետևյալի վրա.

- **Իրավունքի առումով.**

1. Բոլոր երեխաները միասին սովորելու իրավունք ունեն:
2. Երեխաներին չի կարելի թերարժեքորել կամ նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել հաշմանդամության կամ սովորելու դժվարություններ ունենալու պատճառով:
3. Հաշմանդամ մեծահասակները, որոնք ժամանակին սովորել են հատուկ դպրոցներում, այսօր արդեն պահանջում են վերջ տալ խտրականությանը:
4. Երեխաներին տարատեսակ դպրոցներում միմյանցից առանձնացնելու օրինական պատճառներ չկան: Երեխաները պետք է սովորեն միասին: Դա օգտակարկլինի բոլորի համար: Պետք չէ առանձնացնել նրանց միմյանցից:

Կրթության որակի առումով.

1. Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակադեմիական և սոցիալական առումներով, երեխաներն ավելի լավ արդյունքների են հասնում ներառական կրթության դեպքում:

2. Հատուկ դպրոցում չկա այնպիսի բան, որ չի կարելի անել հանրակրթական դպրոցում:

3. Նվիրվածության և աջակցության դեպքում ներառական կրթությունը ուսումնական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումն է:

Սոցիալական հարցերի առումով.

4. Խտրականությունը երեխաների մեջ սերմանում է վախ, տգիտություն, նախապաշարումներ, չարություն:

5. Բոլոր երեխաները զգում են կրթության կազմակերպման այնպիսի ձևի կարիք, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել բոլորի հետ և պատրաստվել հասարակական կյանքին:

6. Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Բայց այս ամենից բացի կարող եք գտնել նաև այլ առավելություններ, որոնց մասինարժե նշել: Ներառական կրթությունը շատ կարևոր է, քանի որ՝

· Բոլոր երեխաները կարող են դառնալ իրենց համայնքի մի մասը և ունենալ պատկանելության զգացում և ավելի լավ պատրաստվել համայնքի կյանքում, որպես երեխաների և չափահասներ:

· Այն առաջարկում է ավելի լավ ուսուցման հնարավորություններ: Տարբեր ունակություններ ունեցող երեխաները հաճախ ավելի լավ են մոտիվացվում, երբ նրանք սովորում են այլ երեխաների հետ:

· Բոլոր երեխաների սպասումները ավելին են: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս զարգացնել անհատիուժերն ու տաղանդը:

· Այն թույլ է տալիս երեխաներին աշխատել անհատական նպատակների վրա, իրենց տարիքի այլ աշակերտների հետ միասին:

· Այն նաև խրախուսում է ծնողների մասնակցությունը իրենց երեխայի

կրթության մեջ:

· Այն քաջալերում է հարգանքի և պատկանելության մշակույթը: Այն նաև հնարավորություն է ընձեռում ծանոթանալու անհատների տարբերություններին և ընդունել այդ տարբերությունները:

· Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին միմյանց միջև զարգացնել ընկերությունը: Ընկերությունն էլ իր հերթին զարգացնում է դերի կարևորության մոդելը:[12]

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի մինչև 2025 թվականը նախատեսվում է, որ Հայաստանը անցում կկատարի ամբողջական և համընդհանուր ներառական կրթության համակարգի:

Ներառական կրթության խնդիրները

Որքան էլ տեղեկացված և ուսումնասիրած լինենք, որևէ նոր երևույթ, ցանկացած նորարարություն իր ներդրման, զարգացման և կայացման ճանապարհին հանդիպում է բազմաթիվ դժվարությունների և խնդիրների: Պետք է փաստել, որ ներառական կրթությունն էլ ունի մի շարք խնդիրներ և բացթողումներ, որոնք են՝

1. **Ֆիզիկական համապատասխան միջավայրի բացակայություն**

Հանրային կառույցները, ինչպիսիք են բնակելի շենքերը, հյուրանոցները, առևտրի կենտրոնները, կինոթատրոնները, հասարակական տրանսպորտը, ցավոք, հաճախ նաև ուսումնական հաստատությունները հարմարեցված չեն ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին, ուստի նրանց համար տարբեր վայրերում գտնվելու հնարավորությունը հաճախ սահմանափակված է: ԿԱՊԿ ունեցող սովորողների շփումը ընկերների հետ ևս կարող է սահմանափակվել, եթե չկան համապատասխան ֆիզիկական հարմարեցումներ, օրինակ, երեխան կարող է չունենալ ընդմիջմանը միջանցք դուրս գալու հնարավորություն, մյուս սովորողների հետ բակում խաղալը կամ ճաշարանում ճաշելը կարող է դժվար կամ անհնարին լինել:

2. **Դպրոցների մասնագիտական ռեսուրսների պակաս**

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ պետք է աշխատի տարբեր մասնագետներից կազմված թիմը՝ անկախ երեխաների թվից և կրթության առանձնահատուկ կարիքների բնույթից (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ): Իրականում նման ամբողջական թիմ չի հավաքվում:

Ուսուցիչների համար դժվար է աշխատել խնդիրներ ունեցող երեխաների հետ , իսկ ուսուցչի օգնականները չեն կարող բազմամասնագիտական թիմի ողջ պարտականությունները կրել իրենց վրա:

3. **Դպրոցների դասասենյակները հարմարեցված և ապահովված չեն անհրաժեշտ գույքով:**

Հետազոտությունների արդյունքում պարզվեց , որ անհրաժեշտ են ռեսուրս սենյակներ, որտեղ մասնագետ-ուսուցիչները կաշխատեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ:

Անհրաժեշտ է նաև սեղան-աթոռները հարմար լինեն, հարմարեցված աշխատանքային պարագաներ և դիդակտիկ պարագաներ լինեն :

Ինչպես նաև ՝ հարմարեցված գրենական պիտույքներ (գրիչներ, մատիտներ, մկրատներ, գրքերը սեղանին ամրացնող սիլիկոնե տակդիրներ, հաշվիչներ, գրաֆիկական թղթեր, եռաչափ նկարներիբացակայություն և այլն), որպեսզի ավելի մատչելի ու հաճելի լինի աշակերտների համար դաս սովորելը:

4. Օրենքի անընդհատ փոփոխություն

Համընդհանուր ներառական կրթության դաշտում փոփոխությունները տեղի են ունենում <<ժամ առ ժամ>>: Չկա հստակեցում և կայունություն, որի արդյունքում մասնագետների իմացության և տեղեկատվականության շփոթություն է առաջանում:

Օրենքը հրապարակելուց առաջ չկա որևէ կանխորոշում դժվարություններին հանգելու մասին, ուսուցիչները գործնականորեն չգիտեն, թե ինչին կարող են բախվել:

5. Ուսուցիչների համար դասընթացների կազմակերպման պակաս

Աշխատելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ՝ հաճախ առաջանում են հարցեր, որոնց պատասխանները ուսուցիչները չունեն: Բացի ուսուցիչներին ներառական կրթության վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ տրամադրելը՝ կարևոր են նաև գործնականում իրականացվող սեմինարները, որի պակասը նկատելի է:

6. Աշակերտների թվաքանակ

Գաղտնիք չէ, որ այսօր մեր դպրոցներում դասարանները գերհագեցած են, և մանկավարժն իր աշխատանքն իրականացնում է միաժամանակ մինչև 30-35 երեխայի հետ, մինչդեռ, ներառման գործընթացի իրականացման ճանապարհին մեծ դասարանները դիտարկվում են որպես բավական ծանրակշիռ խոչընդոտ[14]: Բնականաբար, այս հանգամանքը ոչ միայն իր բացասական ազդեցությունն է ունենում մանկավարժ-աշակերտ համագործակցության վրա, այլև սահմանափակում է աշակերտներից յուրաքանչյուրին դասապրոցեսում ներգրավելու հնարավորությունը, հատկապես՝ դասավանդման ավանդական մեթոդների կիրառման պարագայում:

Վերը նշված դժվարությունները, բնականաբար, չեն կարող չանդրադառնալ ներառական կրթության նկատմամբ մանկավարժների վերաբերմունքի վրա. եթե դասարանում ժամանակի կառավարման, տարբեր ընդունակություններ ունեցող երեխաների հետ արդյունավետ մեթոդների և միջոցների ընտրության ու կիրառման հետ կապված առկա են լինում մի շարք դժվարություններ, ներառական կրթությունն ընկալվում է որպես

բարդ իրագործելի գործընթաց, որի իրականացման համար անհրաժեշտ քայլերը մենք հաճախ լավ չենք պատկերացնում: Արդյունքում՝ այն դառնում է հերթական բարդությունն ու պատնեշը մեր և երեխաների, մեր և ներառման գործընթացի արդյունավետ քայլերի միջև:

7. Հանրության կարծիք

Հանրության կարծիքը բացասական է ԿԱՊԿ ունեցող երեխայի նկատմամբ, բայց հիմնական խնդիրը տեղեկացվածությունն է: Շատ ծնողներ խուսափում են բարձրաձայնել իրենց երեխաների խնդիրների մասին, քանի որ հասարակությունը չի հասել այն մակարդակին, որ բոլորը պարզ խոսեն <<հատուկ>>երեխաների մասին: Դպրոցներում նույնպես դեռ կա խտրական և կարծրատիպային վերաբերմունք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:

8. <<Հայկական>> մտածելակերպ

Շատ ծնողներ կան, որ խուսափում են իրենց երեխաների խնդրի մասին խոսելուց , հատկապես՝ աղջիկ երեխաների, որովհետև մտածում են՝ երեխան հետագայում ամուսնանալու խնդիր կունենա, իսկ տղաների դեպքում էլ հակառակն է ՝ բանակից ազատվելու խնդիրը կլուծվի: Ցավոք, շատ ծնողների մտածելակերպի հետևանքով տուժում են երեխաները և նրանց կրթական գործընթացը:

9. Հատուկ չափանիշների բացակայություն

Իհարկե բոլոր երեխաների հետ էլ կարելի է աշխատել՝ անկախ իրենց մտավոր ունակություններից, պարզապես պետք է հաշվի առնել յուրաքանչյուրի իրավունքը, և մի երեխայի /ԿԱՊԿ ունեցող/ իրավունքի հաշվին չխախտել մեկ այլ երեխայի իրավունքը:

Չկան հատուկ չափանիշներ, որոնցով կարելի է ընտրել այն երեխաներին, որոնք կարող են դասի նստել, մյուսներին էլ հատուկ դասընթացով աստիճանաբար կարողանան մասնակից դարձնել դասապրոցեսին: Ինչպես նաև՝ պետք է լուրջ տարբերակում մտցնել ԿԱՊԿ ունեցող երեխաների միջև ու կախված խնդրից, նրանց ներառել կամ չներառել <<սովորական>> դասարաններում: Օրինակ ՝ ծանր հոգեկան խնդիր ունեցող երեխային պետք է համապատասխան հաստատություն տանել, որովհետև վտանգավոր է և՛ տվյալ երեխայի, և՛ մյուսների համար, կամ էլ տվյալ երեխային ցուցաբերել անհատական աջակցություն նույն դպրոցում, սակայն <<հատուկ>> դասասենյակում, քանի որ դպրոցն ինքն է կրում պատասխանատվություն յուրաքանչյուր երեխայի համար:

10. Ուսումնական հաստատություններում ռեսուրս սենյակների անհրաժեշտություն:

Ոչ բոլոր դպրոցներն ունեն բավականաչափ վերանորոգված, համապատասխան

գույքով ու տեխնիկայով հագեցված ռեսուրս սենյակներ: Ուսումնական հաստատություններում ռեսուրս սենյակների առկայությունը խիստ կարևոր է: Երբեմն դասարանը ԿԱՊԿ ունեցող սովորողների համար կարող է լինել աղմկոտ և լի շեղող ազդակներով, և այդդեպքում նրանք կարող են գնալ ռեսուրս սենյակ, որպեսզի կարողանան ավելի լավկենտրոնանալ և ընկալել նյութը, մանավանդ, երբ նոր տեղեկատվություն է ներկայացվում: Ռեսուրս սենյակը նաև հնարավորություն է տալիս մասնագիտական միջամտությունների կազմակերպման համար: Աջակցող մասնագետների համար ցանկալի է ունենալ համապատասխան հագեցվածություն ունեցող սենյակ՝ երեխայի/երեխաների հետ արդյունավետ աշխատելու նպատակով:

11. Ներառական կրթության պնդումներից մեկն է չտարբերակելը:

Չնայած ներառական կրթության բազմաթիվ պնդումներին, որ բոլոր երեխաներն էլ իրավունք ունեն սովորել, բոլորն էլ հավասար են, պետք չէ առանձնացել որևէ մեկին, սակայն հանգում ենք մի խնդրի , որտեղ հակասություն է առաջանում: Օրինակ՝ դպրոցում բարձր դասարանում սովորող երեխան, ում կրթական մակարդակը համապատասխանում է առաջին դասարանի մակարդակին, և ով <<տարբերվում>> է իր մնացած դասընկերներից և՛ ֆիզիկական, և՛ ինտելեկտուալ, և՛ այլ ֆունկցիաներով՝ հետևելով օրենքին, դասին նստում է իր հասակակիցների հետ: Նրա հետ աշխատում են ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների շրջանակներում, որն էլ արդեն առիթ է հանդիսանում երեխայի տարբերակվելուն, առաջանում են կոմպլեքսներ, հոգեբանական մի շարք խնդիրներ: Հենց անհատական ուսուցման պլանն արդեն իսկ առանձնացնում է այդ երեխային մնացածից:

12. Ֆինանսավորում

Դպրոցում աշխատող բոլոր այն մասնագետները, ովքեր աշխատում են ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ, կատարում են հավելյալ տիտանական աշխատանք և այն մասնագետները , ովքեր չունեն ԿԱՊԿ ունեցող աշակերտներ, ստանում են հավասար աշխատավարձ ԿԱՊԿ ունեցող աշակերներ ուսուցանող մասնագետների հետ:

13. Հեռուստատեսություն

Այսօր հեռուստատեսությունը շատ քիչ է անդրադարձ կատարում համընդհանուր ներառականությանը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև սոցիալական հոլովակներին, որոնք մարդկանց կսովորեցնեն ճիշտ վերաբերվել ԿԱՊԿ ունեցող երեխաներին, օրինակ՝ նկարահանվեն ֆիլմեր, որտեղ կխոսեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին , կամ կազմակերպվեն նման ֆիլմերի դիտումներ:

14. Դպրոցների շենքերի ներքին հարմարեցվածություն

Դպրոցների շենքերի ներքին հարմարեցվածությունը չի համապատասխանում ուսումնառության համընդհանուր միջավայրի ձևավորման հիմնական սկզբունքներին: Դպրոցների մի մասը փորձում է ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպել միայն շենքի առաջին հարկում: Սակայն այս մոտեցումը չի գործում միջին և ավագ դպրոցի պարագայում, որտեղ առկա են լաբորատորիաներ՝ տեղակայված երկրորդ և ավելի բարձր հարկերում: Այդ դեպքերում երեխաներն ուղղակի չեն մասնակցում լաբորատոր աշխատանքներին՝ դուրս մնալով կրթության որակի կարևորագույն բաղկացուցիչ մաս կազմող գործնական աշխատանքներից: Այսպիսով, դպրոցների ներսում չկան հարմարություններ հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների տեղաշարժման համար, ինչպես նաև սանհանգույցների հարմարեցվածության բացակայությունը կամ անհամապատասխանությունը նույնպես խնդիր է առաջացնում ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար:

Հիմնականում դպրոցներից շատ քչերում է սանհանգույցը հարմարեցված ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին: Որպես կանոն՝ սանհանգույցներն ունեն նեղ դռներ և չհարմարեցված բռնակներ:

Շատ դպրոցներում առկա են տիպային դպրոցական սանհանգույցներ, իսկ օրինակ գյուղերում՝ դրանք հիմնականում գտնվում են անմխիթար պայմաններում, և երեխաները ընդհանրապես չեն օգտվում զուգարանից:

15. Դասասենյակներում հանգստի գոտու բացակայություն:

Քանի որ յուրաքանչյուր դպրոցում կրթական միջավայրի ապահովմանն անհրաժեշտ նախապայմաններից է նաև դասասենյակներում հանգստի գոտու առկայությունը, պետք է նշել, որ այն երեխաները, ովքեր 15-20 րոպե են միայն կարող նստել դասաժամին, չեն կարողանում լիցքաթափվել դասասենյակում, ստիպված ուսուցչի օգնականի կամ որևէ այլ մասնագետի հետ դուրս են գալիս դասասենյակից և կրթական գործընթացը փորձում են կազմակերպել դասապրոցեսից դուրս: [4]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության իրականացման առավելությունների ու առկա դժվարությունների ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հնարավորություն տվեց առավել հստակ պատկերացում կազմել ներառական կրթության, ներառման քաղաքականության, այս ոլորտում հանրակրթական դպրոցների ձեռքբերումների, առկա դժվարությունների, բացթողումների և այլնի մասին: Այս ամենից ելնելով՝ հանգեցինք հետևյալին. ներառումը մոտեցում է, որի դեպքում պետք է հաշվի առնվի աշակերտների բազմազանությունը, երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա և ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցնել սովորողների ընդունակություններին ու պահանջմունքներին: Այս պրոցեսում կարևոր է ուսուցիչների, բազմամասնագիտական խմբի յուրաքանչյուր անդամի, ծնողների և նրանց դերը, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են ներդնում, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա սովորել իր համար առավելագույն օգուտով:

Այսօր հաճախ է խոսվում ներառական կրթության, ԿԱՊԿ ունեցող երեխաների և նրանց հիմնախնդիրների մասին, որ թվում է, թե ամեն ինչ ասված է: Սակայն ամեն անգամ յուրաքանչյուր կոնկրետ երեխայի հետ հանդիպումից հետո հարց է ծագում՝ ի՞նչ գիտենք հենց այս երեխայի, նրա ներաշխարհի, հույզերի և կրթության այն առանձնահատուկ պայմանների մասին, որոնց կարիքը նա ունի, արդյո՞ք նա իրեն, այնուամենայնիվ, տարբերակված չի զգում, և վերջապես, ինչպիսի՞ն է նա՝ ԿԱՊԿ ունեցող երեխան:

Դեռևս նախադպրոցական տարիքից սկսում ենք անընդհատ բարձրաձայնել ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթական իրավունքի մասին ու մեր կարծիքով փորձում ենք նպաստել դրա իրացմանը: Սակայն հաճախ մենք՝ երեխաներին շրջապատող մեծահասակներս ենք մոռանում ոչ պակաս կարևոր մեկ այլ իրավունքի մասին՝ լինել այնպիսին, ինչպիսին կաս: Այո՛, ինչպես ցանկացած երեխա, Դաունի համախտանիշ, աուտիզմ, մանկական ուղեղային կաթված, լսողության կամ տեսողության, խոսքային կամ վարքային խանգարում ունեցող, իր առանձնահատկություններով հանդերձ՝ ընդունված, հասկացված և սիրված լինելու կարիք ունի: Մենք տարբեր պատճառներով պատնեշներ ենք ստեղծում այն ամենի նկատմամբ, ինչ տարբեր է, անսովոր է, դեռ չհասկացված է, անորոշ է, փակում ենք զարգացման, նոր տպավորություններ, նոր գիտելիքներ, նոր հույզեր ու նոր փորձ ձեռք բերելու ճանապարհը, թեև արդեն շատ երկար ժամանակ է, որ խոսում ենք այդ պատնեշները քանդելու, հավասար իրավունքների ու ներառման կարևորության մասին: Կարծում եմ՝ դժվար է ներառումն իրականացնել նախադպրոցական կամ դպրոցական հաստատությունում, քանի դեռ այն չի սկսվել մերգիտակցության մեջ:

Միգուցե միայն այս դեպքում մենք կկարողանանք գիտակցել, որ իրական ներառումը այլոց ճանաչելու ու ընդունելու հնարավորություն է, այն գիտակցումն է, որ կարող ես ոչ միայն օգնել, այլև օգնություն ստանալ: Եվ վերջապես, որո՞նք են կրթության այն առանձնահատուկ պայմանները, որոնց կարիքն ունեն երեխաները. միգուցե ձուկն իսկապե՞ս ջրում է իրեն լավ զգում, ինչպես ասվում է հայտնի ասացվածքում, կամ էլ երևի դրանք հենց այն պայմաններն են, որոնցում դադարում ենք կենտրոնացնել ուշադրությունը մեր միջև եղած տարբերությունների վրա ու խնդիրներից զատ, նկատում ենք հնարավորությունները: Այո՛, երբեմն դա այնքան էլ հեշտ չէ, բայց միայն այդ դեպքում է հնարավոր տեսնել, թե որքան նման ենք իրար, միայն այդ դեպքում է հնարավոր ապահովել իրական ներառում: Եթե մենք չենք կարող հանրությանը պատշաճ հրամցնել ներառական կրթությունը, ապա դրա ներդրումը կարող է վնասել ավելի, քան օգնել, որի արդյունքում կտուժեն շատ երեխաներ: Միանշանակ համամիտ եմ այն գաղափարի հետ, որ բոլոր երեխաներն էլ կարող են սովորել, պարզապես ո՛չ նույն օրը, և ո՛չ նույն կերպ: Ներառումը ոչ թե երեխայի, այլ համակարգի հարմարեցումն է, սակայն, հետազոտությանս ընթացքում կատարած հարցման արդյունքում, որն ուղղված էր և՛ ուսուցիչներին, և՛ աշակերտներին, ովքեր առնչություն են ունենում ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ, պարզ դարձավ, որ մեդալը միանշանակ ունի 2 կողմ՝ դրական և բացասական ու դրանք անքակտելի են ինչպես գիշերն ու ցերեկը, սևն ու սպիտակը, բարին և չարը: Եզրափակելով ուսումնասիրության արդյունքները՝ ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ ներառական կրթության համակարգը կարևորագույն քայլ է ավելի առողջ, հանդուրժող ու հոգատար հասարակություն ունենալու համար: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները, պարզապես պետք է ճիշտ մոտեցում ցուցաբերել ու լուծումներ տալ այս ամենին:

Գործնական մաս

Ստորև ներկայացնում եմ անանուն հարցումների արդյունքները, որը իրականցվել է մոտ 100 աշակերտների շրջանակներում :

Հարցման հղում՝ https://forms.gle/mAS9McF8ZEKUPM7FA





















Վերլուծություն

<u>Հարցման արդյունքում պարզվեց, որ աշակերտների</u> 56,6%-ը կողմ է, որ ԿԱՊԿ ունեցող աշակերտները հաճախեն դպրոց, իսկ 43,4% –ն էլ մտածում է , որ ԿԱՊԿ ունեցող աշակերտները ավելի լավ է հաճախեն հատուկ դպրոցներ

- 96,4%-ը օգնում է ԿԱՊԿ ունեցող աշակերտներին
- 47%-ը կարծում է, որ այդ աշակերտները ընդգրկցած են դասապրոցեսին, 44,6 –ը ՝ քիչ է ընդգրկված, իսկ 8,4 –ը ՝ ընդգրկված չէ:
- 44,6%-ը կարծում է, որ խնդիր ունեցող աշակերտների ներկայությունը չի խանգարում ուսումնական գործընթացին, 27,7 %-ը կարծում է , որ երբեմն խանգարում է, իսկ 26,5%-ը պատասխանել է դրական:
- 65,1%-ը շփման մեջ խնդիր չի ունեցել ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ, իսկ 34 %-ն ՝ ունեցել է:

Ըստ ՀՀ տարբեր մարզերի հարցման մասնակիցների կարծիքների պարզվեց , որ

1. Դպրոցներում ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար ամբողջովին համապատասխան միջավայր և պայմաններ կան միայն 6,9% դպրոցներում:



2. Դպրոցների 46,5%-ում կան ռեսուրս սենյակներ, իսկ 53,5%-ում՝ դեռևս չկան։



3. Մարդկանց 91,1% կարծում է , որ դպրոցներում անհրաժեշտ է կատարել աշակերտների թվաքանակի պակասեցում,հատկապես այն դասարաններում, որտեղ կան ԿԱՊԿ ունեցող աշակերտներ։



4. 53,5%-ը կարծում է, որ պետք է լինեն հատուկ չափանիշներ, որոնցով ընտրեն այն երեխաներին, որոնք կարող են դասին նստել, մյուսներին էլ հատուկ դասընթացով աստիճանաբար կարողանան մասնակից դարձնել դասապրոցեսին, իսկ 46,5% կարծում է , որ բոլոր երեխաներն էլ հավասար են և իրավունք ունեն սովորել նույն դասարանում:



5. Հարցման մասնակիցների մեծ մասը կողմ է, որ վերապատրաստումնեները լինեն և՛ դասախոսությունների տեսքով, և՛ <u>պրակտիկ</u> դաշտում:



6. Դպրոցների բազմամասնագիտական թիմը ամբողջական է միայն 20,8% դպրոցներում։



7. Հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ հեռուստատեսությամբ ներառական կրթության մասին քիչ է խոսվում կամ գրեթե չի խոսվում։



Հարցման հղում՝ https://forms.gle/5LXhu2caUSQqCvXq7

Հետազոտությունն անցկացնելու նպատակով Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի ուսուցիչներին տրվել է նաև 8 հարցից բաղկացած հարցաթերթ, որը ներկայացված է ստորև:

Համընդհանուր ներառականության առավելությունները և բացթողումները

Հարցազրույց

Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի ուսուցիչների հետ

Նպատակ՝

Բացահայտել ներառական կրթության դրական և բացասական կողմերը:

Անուն / Ազգանուն՝ _____

Պաշտոն՝ _____

Դասավանդվող առարկա՝ _____

1. Ինչպե՞ս եք, ընդհանուր առմամբ, գնահատում ներառական կրթության կայացվածությունը հանրակրթական դպրոցներում: Կո՞ղմ եք ներառական կրթության այս մոդելին:

2. Ի՞նչ խնդիրներ կառանձնացնեք ներառական կրթության և հանրակրթական ծրագրով համատեղ սովորող աշակերտների դասապրոցեսի կազմակերպման գործնթացում/նշե՛ք առաջնայինները/:

3 . Ինչպե՞ս եք գնահատում ԿԱՊԿ ունեցող երեխաների ընդգրկվածությունը և համարժեք մասնակցությունը դասապրոցեսին:

4. Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ գործոններ կարող են դրական ազդել ԿԱՊԿ ունեցող աշակերտների դասապրոցեսների նկատմամբ հետաքրքրվածության բարձրացմանը:

5. Նշե՛ք ներառական կրթության առավելություններից 3-ը:

6. Ինչպիսի՞ բարդությունների եք հանդիպում ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ աշխատանքում:

7. Արդյո՞ք խնդիրներ եք ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների և ծնողների՝ ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ համատեղ սովորելու վերաբերմունքի հետ կապված:

8. Ի՞նչ կփոխեք համընդհանուր ներառական կրթության մեջ, որը կբխի բոլոր՝ այդ թվում նաև ԿԱՊԿ ունեցող աշակերտների շահերից:

Ուս. օգնական՝ Ա. Սահակյան

Եզրափակելով իմ կատարած հետազոտությունների արդյունքները՝ ստորև ներկայացնում եմ մի քանի առաջարկներ, որոնք միտված են համընդհանուր ներառական կրթության բարելավմանը, յուրաքանչյուր անհատի իրավունքի,այդ թվում նաև առանձնահատուկ կարիք ունեցող անձանց որակյալ կրթությանը.

Առաջարկներ

- Մենք կհասնենք համընդհանուր ներառմանը, բայց պետք է առանձին ուշադրություն դարձնենք հատկապես ինտելեկտուալ ֆունկցիայի 3-րդ և 4-րդ աստիճանով գնահատված երեխաներին և այնուամենայնիվ նրանց համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ պայմաններ հոգուտ և՛ նրանց , և՛մնացած աշակերտների , այդ թվում նաև 1-ին և 2-րդ աստիճանով գնահատված երեխաների:
- Պետք է լինեն հատուկ չափանիշներ, որոնցով ընտրեն այն երեխաներին, որոնք կարող են դասին նստել, մյուսներին էլ հատուկ դասընթացով **աստիճանաբար** կարողանան մասնակից դարձնել դասապրոցեսին: Ինչպես նաև պետք է լուրջ մոտեցում ցուցաբերել ԿԱՊԿ ունեցող երեխաների նկատմամբ ու կախված խնդրից, նրանց ներառել կամ չներառել սովորական հանրակրթական դպրոցներում:

Ծանր և խորը խնդիրներ ունեցող երեխաների համար դպրոցներում պետք է լինեն ռեսուրս դասասենյակներ, որտեղ աջակցություն կստանան լրացուցիչ մասնագետների կողմից: Նման խնդիր ունեցող երեխաներին նաև անհրաժեշտ են անձնական դայակներ:

- Պետք է լինի համապատասխան միջավայր, ու պայմանները համապատասխանեն ԿԱՊԿ ունեցող բոլոր երեխաներին և՛ քաղաքներում, և՛ հատկապես գյուղական համայնքներում: Համընդհանուր ներառումը պետք է վերաբերվի ոչ միայն ՆՈՒՀ-երին ու դպրոցներին, այլև ԲՈՒՀ-երին և այլ կրթական և սոցիալական հարթակներին, այլապես այս ներառական կրթության ներդրումը դառնալու է անիմաստ ու անօգուտ ծրագիր:
- Դպրոցներին անհրաժեշտ է համալրել մասնագետներով , օր.՝ սուրդո մանկավարժ /քանի որ ՎՏՄԿ-ն էլ չունի նման մասնագետ/, ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ: Միայն ՏՄԱԿ-ի մասնագետներով սահմանափակվելը քիչ է, հատկապես լուրջ խնդիրներ ունեցող երեխաների համար, ովքեր հատուկ աջակցության կարիքը ունեն ամեն օր:

- Անհրաժեշտ է վերանայվեն դպրոցում աշխատող բոլոր այն մասնագետների աշխատավարձերը, ովքեր աշխատում են նաև ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ:
- Դասարաններում անհրաժեշտ է կատարել աշակերտների թվաքանակի պակասեցում, հատկապես այն դասարաններում, որտեղ կան ԿԱՊԿ ունեցող աշակերտներ:
- Օրենքի կետով սահմանել, որ ուսուցչի օգնականները, որպես բազմամասնագիտական թիմի անդամներ, ոչ միայն խորհրդատվության նպատակով, այլև առհասարակ հարկ եղած դեպքում կարողանան ներկա գտնվել ԿԱՊԿ ունեցող աշակերտների անհատական աջակցությանը, որը, միանշանակ, լավ համագործակցության դեպքում, կաշխատի հօգուտ աշակերտի, քանի որ նախնական դիտարկման փուլում, ուսուցչի դիտարկումից հետո, այն կատարում է ուսուցչի օգնականը, իսկ բազմամասնագիտական թիմի թիմային լավ աշխատանքը կբերի լավ արդյունքների և գործնականում մեթոդների և հնարների պակասը որոշակիորեն կլրացնի այդ բացը:
- Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև սոցիալական հոլովակներին, որոնք մարդկանց կսովորեցնեն ճիշտ վերաբերվել ԿԱՊԿ ունեցող երեխաներին:
- Ներառական կրթությունը պետք է սկսել մանկավարժների պարբերաբար վերապատրաստումներից: Անհրաժեշտ է, որ վերապատրաստումները լինեն ոչ թե դասախոսությունների տեսքով, այլև *պրակտիկ դաշտում*:
- Անհրաժեշտ է, որ համընդհանուր ներառական կրթության դաշտում լինի օրենքների կայունացում, հստակեցում, որի անընդհատ փոփոխության հետ տեղի է ունենում <<քաոս>>:
- Պետք է դասարաններում լինեն աշակերտների թվաքանակի պակասեցում, որպեսզի ուսուցիչը ԿԱՊԿ ունեցող երեխաներով էլ զբաղվելու ժամանակ ունենա: Ինչպես նաև պետք է մի դասարանում մեկից ավել ԿԱՊԿ ունեցող աշակերտ չլինի, որպեսզի ուսուցիչը կարողանա իր ժամանակը տրամադրել բոլորին անհատապես և ունենա որակյալ արդյունք:
- Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև սոցիալական հոլովակներին, որոնք մարդկանց կսովորեցնեն ճիշտ վերաբերվել ԿԱՊԿ ունեցող երեխաներին, օրինակ՝ նկարահանվեն ֆիլմեր, որտեղ կխոսեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող երեխաների և հաշմանդամություն ունեցող անհատների մասին, կամ կազմակերպվեն նման ֆիլմերի դիտումներ:

Եզրափակելով կատարած հետազոտություններս, աշխատանքս ուզում եմ ավարտել հետևյալ տողերով՝

Դրական մտածողը տեսնում է անտեսանելին, զգում անշոշափելին և հասնում անհնարինին: [7]

Ուստի եկե՛ք միշտ մտածենք դրականը…

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, մաս 1-ին, հոդված 3, կետ 10.3:

2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

3. Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա., Մարգարյան Լ.Հ., Հակոբյան Լ.Գ., Քալաշյան Ա.Ա., Գրիգորյան Լ.Կ., Զաքարյան Լ.Կ., Ներսիսյան Ա.Ռ., Հարությունյան Գ.Հ., Մուրադյան Ռ.Մ., Մարգարյան Հ.Վ., Ինչպես խթանել ներառումը դասարանում, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2021:

4. Սվաջյան Ա. Հ. , մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Բաբայան Լ.Ա., մանկավարժական գիտությունների թեկնածու Թադևոսյան Է.Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու Հարությունյան Մ.Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մանուկյան Ա.Տ., հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս.Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ադամյան Հ.Ա. Օհանյան Հ.Վ., Արդյունավետ հարմարեցումներ, Որակյալ կրթություն /դասագիրք/, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2022:

5. Ռենատա Տիքա, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ Բրայեն Հ. Էբերի, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ Քրիսթոֆեր Ջոնսթոն, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ Ալվարդ Պողոսյան, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան ներկայացուցչություն, Հայաստանի Հանրապետություն Փոլա Ֆրեդերիկա Հանթ, Հաշմանդամություն, կրթություն և զարգացում կազմակերպություն, Ներառական կրթության ռազմավարություններ, Երևան-2019:

6. https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu

7. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

8. https://mankavarjhogeban.wordpress.com

9. Սվաջյան Ա.Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ադամյան Հ.Ա. Ազատյան Թ.Յու., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազարյան Ռ.Ն., մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբայան Լ.Ա., մանկավարժական գիտությունների թեկնածու Թադևոսյան Է.Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու Հարությունյան Մ.Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մանուկյան Ա.Տ.,

հոգեբանական գիտությունների թեկնածու Մուրադյան Ս.Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Օհանյան Հ.Վ., «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում», Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան – 2020:

10. https://hmk.am/wp-content/uploads/2021/03/dzernark-mankavarjneri-hamar.pdf, էջ 42:

11. https://innostud.am/application/library/4b0d3123.pdf

12. Ս. Թադևոսյան, Ա. Բախշյան, Ա. Հովսեփյան, Ս. Հայթյան, Ա. Մուրադյանը, Մ. Աղաջանյան, Գ. Կարապետյան, Օ. Միքայելյան, Հ. Օհանյան, Վ. Կատինյան, Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան: 2017, 146 էջ:

13. https://lyd.am/aphorisms/

14. Բաց հասարակության հիմնադրամ Հայաստան, (2013). ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 56 էջ:

15. Հարությունյան, Մ., Հովյան, Գ., Սարատիկյան, Լ., Ազատյան, Թ., Մուրադյան:
Ս., Տանաջյան, Ք. (2019). Համընդհանուր ներառական գործընթացի կայացման գնահատումը ՀՀ Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերում, Հայկական պետական մանկավարժական համալսարանի համայնքային ներառականության հաշմանդամության հիմնախնդիրների հետազոտական կենտրոն, Երևան, 100 էջ:

16. Հույսի կամուրջ ՀԿ, ՀՄԿ. (2021). ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում կրթության կազմակերպման գործընթացի ներառականության գնահատման ամփոփ արդյունքները: